



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

№ 185-Ա/2

«09» փետրվարի, 2022 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՅՏԻ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառման իրականացման համար կազմակերպության ընտրության մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի:
3. Հաստատել մրցույթին մասնակցության հայտի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» միջոցառման իրականացման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն հայտարարում է կազմակերպության ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**: Մրցույթի արդյունքում նախատեսվում է ընտրել կազմակերպություն, որը մրցութային հիմունքներով երիտասարդ շահառուներին կարող է տրամադրել ֆինանսական աջակցություն հետևյալ ուղղություններով.

- երիտասարդ գիտնականների միջազգային գիտական գործուղումների և շարժունակության ծրագրեր,
- գիտական միջոցառումների կազմակերպում,
- գիտական դրամաշնորհների տրամադրում,
- գիտական միջազգային հրապարկումների որակական և քանակական աճին նպաստող ծրագրերի կազմակերպում,
- օտարերկրյա պետությունների անվանի գիտնականների դասախոսությունների կազմակերպում,
- գիտության ոլորտում երիտասարդների ներգրավման կամ առաջընթացին միտված այլ ծրագրեր:

Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2022 թվականի մարտի 2-ը:

## ՀԱՅՏ

### «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

#### Կազմակերպության

- լրիվ անվանում, կազմակերպատիրավական ձև \_\_\_\_\_
- լիազոր մարմին, գերատեսչական պատկանելություն \_\_\_\_\_
- ղեկավարի ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_
- ղեկավարի գիտական աստիճան, գիտական կոչում \_\_\_\_\_
- պետական ռեգիստրում գրանցման համար, ամսաթիվ \_\_\_\_\_
- հարկ վճարողի հաշվառման համար \_\_\_\_\_
- իրավաբանական հասցե \_\_\_\_\_
- փոստային հասցե \_\_\_\_\_
- էլեկտրոնային փոստի հասցե \_\_\_\_\_
- հեռախոս \_\_\_\_\_
- ինտերնետային կայքէջ \_\_\_\_\_
- ղեկավարի ստորագրություն \_\_\_\_\_

Կ. Տ.

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2022 թ.

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ\*